ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Շուշիի շրջանների տարբեր գյուղերի, Ատեփանակերտ քաղաքի տարածքներում հողային աշխատանքների ժամանակ պատահականորեն հայտնաբերվել են մի շարք հնագիտական նյութեր, որոնք պահվում են Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատմաերկրագիտական թանգարանում։ Այս գտածոները, լրացնելով նախկին, պեղումների և պատահական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հավաքածուները, զգալիորեն հարստացնում են մեր պատկերացումները հայկական բարձրավանդակի պատմական այդ մարգի հնագույն մշակույթի ուսումնասիրության վերաբերյալ։ Այս ժողովածուի մեջ հնագույն նյութերը ներկայացված են չորս սակրերով, որոնցից երեքը գտնված են Շուշիի շրջանի Քարին-տակ գյուղի տարածքից (աղ. III, նկ. 2, 4, 5), իսկ 4-րդը՝ Մարտունու շրջանի Կուսաբերդ (Ղղալա) գյուղի մոտակայքից (աղ. III, նկ. 3)։ Այս սակրերը բաժանվում են երկու խմբի։ Երեքի կոթառները (I խումբ) զարդարված են սեպաձև և ուռուցիկ ելուստներով, իսկ մեկը (II խումբ) զուրկ է այդ ելուստներից։ Սակրերից երեքի իրանների կենտրոնական մասերում կան կլոր կամ բաղմանկյուն, փոքրիկ, ուռուցիկ ելուստներ։ Հետաքրքիր է, որ սակրերից երկուսի ուսերը զարդարված են խորը փորագրված գծիկներով, իսկ մեկի իրանը՝ եղնաձև նախշով։ Այս սակրերը, որ Հայաստանում և Անդրկովկասում հայտնի են մ. թ. ա. XIV դ. և հարատևում են մինչև մ. թ. ա. X դ., լայն տարածում են ստանում հատկապես մ. թ. ա. XII—XI դդ.։ Սրանք հանդիպում են նաև Ղարաբաղում (Առաջաձոր, Կրկժանի գանձ), ինչպես նաև՝ Լճաշենում, Արթիկում, Ախթալայում[1]։ Նշված սակրերը վերաբերում են ուշ բրոնզե դարի վերջին փուլին ու թվագրվում են մ. թ. ա. XII—XI դարերով։ Մստավորապես նույն ժամանակաշրջանով է թվագրվում Ասկերանի շրջանի Քուսանի գյուղի տարածքից գտնված բրոնզե միաձույլ դաշույնը (աղ. III, նկ. 10)։ Նմանատիպ դաշույններ հանդես են գալիս մ. թ. ա. XIV—XIII դդ. և հայտնի են Լճաշենից, Արթիկից, Կամոյից, Էջմիածնից, Էլառից և այլ վայրերից[2]։ Բերված գուգահեռները վերաբերում են ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլին։ Քննվող դաշույնի առավել կատարյալ ձեր և նախշերի հստակությունը հնարավորություն է տալիս այն թվագրել փոքր ինչ ավելի ուշ՝ մ. թ. ա. XIII—XII դարերով։

Գտածոների մյուս խումբը ներկայացված է հիմնականում խեցեղենով և թվագրվում է վաղ երկաթի դարաշրջանով՝ մ. թ. ա. X—VIII դդ.։ Սրանց մեջ հետաքրքիր խումբ են կազմում երեք անոթներ՝ գտնված Խոջաթից (աղ. I, նկ. 1), Ստեփանակերտից (նմանօրինակ անոթներ հայտնի են Ջտրդաբլուից, Մինգեչաուրից, Խանլարից և Օշականից)[3] ինչպես նաև Ճարտարից (տղ. II, նկ. 1,8)։ Այս անոթները ունեն ուռուցիկ իրան՝ զարդարված հորիզոնական գծերով, դիզզագով, բազմաշար թեք գծիկներով և ցանցանախշով։ Անոթների ուսերին կան սեղանաձև բռնակներ, որոնք հայտնի են միջին բրոնզի դարաշրջանի վերջից և հարատևում են մինչև մ. թ. ա. VI—V դդ.։ Հետաքրքիր է նշել, որ Ստեփանակերտի և Ճարտարի անոթների սեղանաձև կանթերի ստորին մասում արված են անցքեր, որոնք ստեղծում են երկրորդ բռնակի տպավորություն։ Անոթների այս խումբը հանդիպում է առաջին անգամ։ Նշված անոթների ուսերին տեղադրված դավաթաձև միջանկյալ անցքով չեն կապվում իրանի հետ և, ըստ երևույթին, կատարում են ճրագի դեր, ինչպես Մուրլեի՝ Ռեդկինլայդերից գտած քրեղանը, որի ուսերին տեղադրված են երեք նման անոթներ[4]։ Իր կառուցվածքով

---

[1] К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе («Советская археология», XXVII, 1957); *О. Ս. Խնկիկյան, Արհեստներ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1977, աղ. 3*; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, табл. XII.

[2] *О. Ս. Խնկիկյան, նշվ. աշխ., էջ 13—17, աղ. 5, Է. Վ. Խաչատրյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 81—82*, Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, рис. 86, с. 176.

[3] М. Н. Погребова, Иран и Закавказье в раннем железном веке, М., 1977, табл. XIX.

[4] С. А. Есаян, Древняя культура племен Северо-Восточной Армении, Ереван, 1976, с. 109, рис. 1.

առանձնանում է Ճարտարից գտնված թեյնիկաձև անոթը (աղ. I, նկ. 7), որի կանթը կամարաձև բարձրանում է շիթի վրա։ Ուսերին տեղադրված են երկու բռնակ, որոնցից մեկը կատարում է նաև ծորակի դեր։ Իրանը կենտրոնական մասում զարդարված է մատնեքներով։ Նման անոթներ գտնվել են Զանգեզուրի տարբեր վայրերից, Մինգեչաուրից, Իրանից և այլն։ Ինչ վերաբերում է նույն ժամանակաշրջանով թվագրվող մյուս խեցանոթներին (աղ. I, նկ. 2, 5, 12 և աղ. II, նկ. 2—4, 6,9), ապա դրանք ներկայացված են լայնաբերան սափորներով, կճուճներով զարդարված ցանցանախշով, բազմաշարք շրջանաձև նախշերով, կլորավուն ելուստներով։ Նմանօրինակ նյութեր հայտնի են Հայաստանի և Արևելյան Անդրկովկասի համաժամանակյա հուշարձաններից։ Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններից գտնված այս նյութերը վկայում են հայկական

Աղյուսակ I

լեռնաշխարհի հյուսիս-արևելյան տարածքի վաղ երկաթեդարյան մշակույթի ընդհանրության մասին։

Խեցանոթների մի այլ խումբ հիմնականում վերաբերում է երկաթի լայն տարածման շրջանին՝

[5] М. Н. Погребова, նշվ. աշխ., աղ. 23։

թվագրվելով մ. թ. ա. VIII—VI դարերով։ Այս խմբում (աղ. 1, նկ. 3, 4, 6, 9, 10, 11, 13, աղ. II, նկ. 2, 5, 7, 10, 11 և աղ. III, նկ. 1, 6—9, 11—12) առանձնանում են մի քանի անոթներ։ Դրանցից մեկը միկանթանի սափոր է՝

Հետաքրքիր է Եռոտանի մեկ բռնակով քրեղանը՝ գտնված Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի տարածքից (աղ. 1, նկ. 6)։ Եռոտանի բազմատեսակ անոթները նույնպես դալիս են ուշ բրոնզի դարից և հանդիպում են Արթիկում[7],



Աղյուսակ II

գտնված Ստեփանակերտից (աղ. I, նկ. 3), որի իրանի վերին մասում կա թռչունի պատկեր՝ թռիչքի ընթացքում, թափահարող թևերով, ճանկերը բացված վիճակում, իսկ բերանում պահած ունի շյուղ կամ որդ։ Այս տիպի թռչնաձարդ և կենդանաձարդ անոթներ հայտնի են սկսած վաղ երկաթի դարաշրջանից[6]։

գանգեզուրի մի շարք վայրերում, Օշականում, Քարաշամբում, Իշխանում[8], Ջայլոնում[9]։ Ուշա-

6 Նույն տեղում, աղ. 22, 23։

7 Т. С. Хачатрян, նշվ. աշխ. նկ. 144։

8 А. А. Мартиросян, նշվ. աշխ., աղ. 36, նկ. 16։

9 Յուրի Ա՛սրյան, Լեռնային Ղարաբաղի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի մի քանի նորահայտ հուշարձանների մասին (ՀՍՍՀ

գրավ է նաև կենդանակերպ անոթը՝ հայտնաբերված Մարտունու շրջանի Հացի գյուղից (աղ. I, նկ. 10)։ Այն ունի երկար իրան, կարճ ոտքեր, և պոչ (գլուխը չարդված է), իրանին անցքեր են արված։ Նման կենդանակերպ (եղջերու, ցուլ, թոչուն և այլն) անոթներ հայտնի են Ղափանից, Զանգեզուրի այլ շրջաններից, Նախիջևանից, Թբիլիսից (Թբիլիսի), Խրտանոցից, Մուսիերիից, Աստղի-բլուրից, Իրանից և այլ հնավայրերից[10]։ Զևերով իրարից տարբերվող այս անոթները մըտ-



Աղյուսակ III

ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններիդ», 1984, № 5, աղ. 1, նկ. 3)։

10 М. Н. Погребова, նշվ. աշխ., առ. 20։

նում են կենդանակերպ խեցեղենի մեջ, որոնք ունեն կենդանու կամ թռչունի իրան։ Այս անոթների մեջքին տեղադրված է ձագարաձև կամ խողովակաձև ելուստ՝ հեղուկը լցնելու համար, իսկ բերանին՝ անցք կամ ծորակ՝ հեղուկը թափելու համար։ Նմանօրինակ անոթներ հանդես են գալիս մ. թ. ա. II հազարամյակի վերջերին, հարատևելով մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը, չնայած անոթները ներկայացված են անկանթ, միականթ և երկկանթ ստփտրներով, որոնք բնորոշ են երկաթի լայն տարածման վաղ փուլին՝ մ. թ. ա. VIII—VII դդ.։

Հետաքրքիր կառուցվածք ունի Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղից գտնված միկանթանի անոթը (աղ. II, նկ. 11), որի իրանը զարդարված է ուղղահայաց իշնող ալիքաձև և ուղիղ գծերով, իսկ բռնակը՝ սրածայր ելուստով և ծեփաշար «գամերի» գլխիկներով։ Գտնվել են նաև մի շարք բրոնզե զարդեր և ապակյա շաղախից մեկ ուլունք։ Դրանց թվին է պատկանում նաև գծիկներով նախշված, իրարից հեռացող ծայրերով ապարանջանը՝ հայտնաբերված Ասկերանի շրջանի Արմենաբաղ բնավանի տարածքից։ Նման ապարանջանները լայնորեն տարածվում են ուշ բրոնզի զարաշրջանից։ Մարտունու շրջանի Սովատեղ գյուղից գտնվել է նաև թռչնակերպ կախիկ (աղ. III, նկ. 8)։ Նմանօրինակ կախիկներ հայտնի են ուշ բրոնզեդարյան և երկաթեդարյան բազմաթիվ հուշարձաններից՝ Արթիկ, Լոռի-Բերդ, Էլառ, Դիլիջան, Աստղաձոր և այլն[11]։

Առանձին և շատ հետաքրքիր խումբ են կազմում բրոնզե ճարմանդները, որոնք երկու կողմից զարդարված են չորսական գնդիկներով՝ գտնված Ասկերանի շրջանի Արմենաբաղ և Մարտակերտի շրջանի Զափար գյուղերից (աղ. III, նկ. 6, 11, 12)։ Նման ճարմանդներ, որոնք կապվում են սկյութական մշակույթի հետ, հանդիպում են Ղոլանլարում[12], Կրկժանում, Ախթալայում, Մուսիերիում, Առաջաձորում, Լուրիստանում, Իրանում և այլ վայրերում[13]։

Մարտունու շրջանի Մշկապատ գյուղից գտնվել է ապակե սև ուլունք (աղ. III, նկ. 9)՝ զարդարված սպիտակ, կապույտ և կարմիր ապուցվածքով օղակներով և գծիկներով։ Սա, ըստ երևույթին, ներմուծվել է Միջագետքից։ Վերջին նմուշը (մոտ 12 սմ երկարությամբ) կորացող ոսկրե իր է, որի վերին մասում արված են երեք զույգ ներսից իրար միացող անցքեր։ Հայտնաբերվել է Ասկերանի շրջանի Ղալբուլաղ գյուղի Տանձատափ վայրից (աղ. II, նկ. 1)։

Քննվող նյութերը, որոնք թվագրվում են ուշ բրոնզից մինչև երկաթի լայն տարածման ժամանակաշրջանով, տվյալներ են հաղորդում բնիկների հոգևոր մշակույթի վերաբերյալ։ Դրանք կազմում են Հայաստանի նյութական կուլտուրայի անբաժանելի մասը և միաժամանակ վկայում են հարևան երկրների հետ ունեցած մշակութային լայն կապերի մասին։

ՅՈՒՐԻ ԱՍՐՅԱՆ

---

[11] С. А. Есаян, Скульптура древней Армении, Ереван, 1980, табл. 35, 36, 63, 65.

[12] Н. В. Минкевич-Мустафаева, Об археологических находках из с. Долаллар («Материальная культура Азербайджана», вып. 1, Баку, 1949).

[13] С. А. Есаян, М. Н. Погребова, Скифские памятники Закавказья, М., 1985, с. 118—124.